ԳԼՈՒԽ ԽԸ.

Կնիքն տանն հայոց լինիցի 'ի մէջ միոյ քսակի և բերանն նորայ կնքեցեալ կնքաւ եօթն նախարարի, որ մինն 'ի նոցանէ լինիցի կնիք Արք եպիսկոպոսի, կալ և մնալն 'ի մէջ միոյ դութինի փակեալ, բանալիքն 'ի ձեռն գծագրին, և դութինն միշտ մնասցէ 'ի տանն հայոց, որում ժամու որ հարկաւոր լինիցի կնքել զոր ինչ նամակ, գծագիրն հանիցէ դութինէն, և եօթն տանուտեարքն նայեսցեն անարատութիւն իւրաքանչ կնքի իւրեանց, եթէ գոցի մաքուր փականօք, հրաման տայցեն գծագրին զի բանասցէ և հանիցէ կնիքն տանն հայոց, և կնքեսցեն զոր ինչ հարկաւոր կնքելոյ, կրկին ամրափակեսցեն և եօթն տանուտեարքն կնքեսցեն յանձնեսցեն գծագրին, որպէս ասացաք 'ի վեր, և ամենայն ժամ այսպէս գործածեսցի կնիքն տանն հայոց։

ԳԼՈՒԽ ԽԹ.

Յետ կատարման նամակօք հաստատելոյ բոլոր տանուտէրաց յայնժամ 'ի միջէ տանուտէրաց և մնացորդ փոխանորդաց հայոց, որ կացին վասն պաշտօնի իշխանութեան, այսինքն 'ի մէջէ բոլոր փոխանորդաց հայոց ընտրեցեալ լինի երեքտասան այրք յատկապէս 'ի սեպհական ազգէ